ՃԱՏՐԱԿԱՅԻՆ (ՇԱԽՄԱՏԱՅԻՆ) ՔԱՅԼԵՐԻ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Posted on March 2, 2025 by Lucy Deukmejian



Category: Opinions

Մարգարիտա Կրտիկաշյան, Երևան, 22 փետրուար 2025

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը վերջերս հայտարարեց, որ Մոսկվան աջակցում է «3+3» ձևաչափով միջխորհրդարանական հանձնաժողովի ստեղծման գաղափարին, ինչը կարող է հանգեցնել Հարավային Կովկասի երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համագործակցությանը Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի հետ: Այս նախաձեռնությունը, որը պաշտոնապես ձևավորվել է 2021 թվականին, նպատակ ունի տարածաշրջանային դերակատարների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Իրանի մասնակցությամբ ստեղծել նոր հարթակ, որը կնպաստի փոխգործակցության և խնդիրների կարգավորմանը: Սակայն Վրաստանը հրաժարվում է միանալ այս ձևաչափին՝ Ռուսաստանի հետ լարված հարաբերությունների պատճառով:

2023 թվականի հոկտեմբերի 23-ին Թեհրանում կայացավ արտգործնախարարների «3+3» ձևաչափով առաջին հանդիպումը, որին Վրաստանը կրկին չէր մասնակցել: 2024 թվականի հոկտեմբերի 18-ին Ստամբուլում տեղի ունեցավ հերթական հանդիպումը, սակայն այն չառաջացրեց ձևաչափի զգալի աշխուժացում: Հանդիպումից հետո որևէ պաշտոնական հայտարարություն չեղավ, սակայն նոյեմբերին Մոսկվայում ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն ընդգծեց, որ տարածաշրջանի խնդիրները պետք է լուծվեն առանց արտաքին ուժերի միջամտության՝ ակնարկելով Արևմուտքի ներգրավվածությունը:

Ռուսաստանը բացահայտորեն հայտարարում է, որ Արևմուտքը Կովկասում ավելորդ խաղացող է, և տարածաշրջանային հարցերը պետք է կարգավորվեն ներպետական ու ներտարածաշրջանային ջանքերով: Մոսկվայի ու Երևանի հարաբերությունները վերջին շրջանում լարված են, բայց ռուսական կողմը շարունակում է եռանդով առաջ տանել «3+3»-ի գաղափարը, ինչը կարող է սահմանափակել Արևմուտքի ազդեցությունը Հայաստանում և տարածաշրջանում:



Սերգեյ Լավրովի խոսքով՝ տարածաշրջանային հարցերի լուծման համար «3+3»-ը ամենաարդյունավետ ձևաչափն է: Նա ընդգծել է, որ ԱՄՆ-ի և ԵՄ-ի՝ հայ-ադրբեջանական գործընթացին միջամտելու փորձերը միայն բարդացնում են իրավիճակը: **«Երբ մեր տարածաշրջանից, նրա ավանդույթներից ու պատմությունից հեռու գտնվող երկրները հայտարարում են, որ ապահովելու են Սյունիքի անվտանգությունը, հարցեր են առաջանում: Օրինակ՝ ես այնքան էլ չեմ հասկանում, թե Եվրամիության առաքելությունը ինչպե՞ս կարող է նման խնդիր կատարել»**,– նշել է Լավրովը:

Թուրքիան և Ադրբեջանը «3+3» ձևաչափը դիտարկում են որպես տարածաշրջանում իրենց քաղաքական օրակարգը առաջ տանելու նոր հնարավորություն: Այս ծիրում ակնհայտ է նրանց նպատակը՝ ապահովել «Զանգեզուրի միջանցքը», սահմանափակել Հայաստանի ինքնիշխանությունը և պարտադրել իրենց պայմանները:

Հայաստանի մասնակցությունը «3+3»-ին կարող է ձևավորել տարածաշրջանային նոր իրականություն, սակայն երկիրը կանգնած է բարդ ընտրության առաջ՝ կա՛մ միանալ այս կազմվածքին (մեխանիզմին)՝ գործակցելով Մոսկվայի պայմաններով, կա՛մ դա մերժել՝ բախվելով Անկարայի և Բաքվի ճնշումներին:

Հայաստանը պետք է չափազանց հաշվենկատ լինի իր քաղաքական որոշումներում՝ գիտակցելով, որ յուրաքանչյուր քայլ ունի երկարաժամկետ հետևանքներ: Քաղաքականությունը նման է Ճատրակի (շախմատի). ամեն քայլը պետք է լինի հաշվարկված, քանի որ տվյալ օրինակում սխալը կարող է արժենալ ոչ միայն մեկ հավաքույդ (պարտիա), այլև ՀՀ-ի ապագան:

Այսօր Հայաստանի իշխանությունները կանգնած են ծանր որոշումներ կայացնելու անխուսափելիության առաջ: Սակայն քաղաքականության մեջ ոչ թե ճնշումներին ենթարկվողն է հաղթում, այլ նա, ով սառնասրտորեն հաշվարկում է իր քայլերը:

Ճատրակի (շախմատի) խաղն արդեն սկսված է, և ժամանակն է մտածված քայլերի...

There are no comments yet.